


11. Ինչպիսի՞ իզոմերներ են X-ը և Y-ը:
- | | |
|-----------------|----------------------|
| 1) միջդասային | 3) ածխածնային կմախքի |
| 2) երկրաչափական | 4) օպտիկական |
12. Բացի X-ից քանի՞ իզոմեր գոյություն ունի միևնույն քիմիական բանաձևով:
- | | | | |
|------|------|------|------|
| 1) 6 | 2) 5 | 3) 7 | 4) 4 |
|------|------|------|------|
13. Որքա՞ն է X-ից Y-ի առաջացման ռեակցիայի ստանդարտ էնթալպիայի փոփոխությունը (կՋ/մոլ), եթե $\Delta_f H^\circ(X) = -11.30$ կՋ/մոլ և $\Delta_f H^\circ(Y) = -7.32$ կՋ/մոլ:
- | | | | |
|-----------|----------|----------|---------|
| 1) -18.62 | 2) 18.62 | 3) -3.98 | 4) 3.98 |
|-----------|----------|----------|---------|
14. Ո՞ր իզոմերն է ավելի կայուն (ս.պ.)՝ X-ը, թե՞ Y-ը:
- 1) հավասարապես կայուն են
 - 2) X
 - 3) Y
 - 4) հնարավոր չէ պատասխանել հարցին
15. 400Կ-ում Y-ից X-ի փոխակերպման ռեակցիայի հավասարակշռության հաստատունը 2.07 է: Որքա՞ն է հավասարակշռային խառնուրդում X-ի մոլային բաժինը:
- | | | | |
|----------|----------|----------|----------|
| 1) 32.6% | 2) 93.5% | 3) 67.4% | 4) 58.6% |
|----------|----------|----------|----------|

Խնդիր 10-3:



Այս նկարում պատկերված մեթոդով հնարավոր է օդից հավաքել արգոնը: Օդի բաղադրությունը մոլային բաժիններով՝ N_2 ՝ 78%, O_2 ՝ 20.95%, Ar ՝ 1%, CO_2 ՝ 0.05%: Խնդիրը լուծելիս օգտվեք տարրերի հարաբերական ատոմային զանգվածների մոտարկված արժեքներից:

16. Որքա՞ն է օդի ծավալը (լ, ն.պ.), որն անհրաժեշտ է 1.12 լ (ն.պ.) ծավալով արգոն ստանալու համար:
17. Որքա՞ն է 0.125 մոլ/լ նատրիումի հիդրօքսիդի լուծույթի նվազագույն ծավալը (մլ), որով հնարավոր է հեռացնել համապատասխան գազը՝ 1.12 լ (ն.պ.) ծավալով արգոն ստանալու համար:
18. Ո՞ր գազի հեռացմանն է մասնակցում պղինձը: Գրեք այդ գազի մոլային զանգվածը (գ/մոլ):
19. Որքա՞ն է պղինձի նվազագույն զանգվածը (գ), որն անհրաժեշտ է համապատասխան գազը կլանելու համար: Պատասխանում գրեք ձեր կողմից ստացված արժեքի միայն ամբողջ մասը:
20. Որքա՞ն է մագնեզիումի նվազագույն զանգվածը (գ), որն անհրաժեշտ է համապատասխան գազը կլանելու համար: Պատասխանը մոտարկեք մինչև ամբողջ թիվ: